ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

№ 430-Ա/2 «08» մայիսի 2018թ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ԵՐԵՎԱՆԻ <<ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ>> ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ>>>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ՝ ՄԻ ՇԱՐՔ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված N 11 հավելվածի 3-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ԵՐԵՎԱՆԻ <<ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ>> ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ>>>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով, առկա ուսուցմամբ, միջնակարգ հանրակրթության հիմքով, 1 տարի ուսուցման տևողությամբ, ըստ կուրսերի սովորողների նախատեսվող սահմանային համապատասխանաբար 20-ական և 20-ական տեղերով՝ 0721.03.4-<<Գինեգործություն և հյութերի արտադրություն>> (0721.03.01.4-<<Վարպետ՝ գինու և հյութերի նախնական արտադրության>> որակավորմամբ) և 0812.01-<<Այգեգործություն>> (0812.01.01-<<Այգեգործ>> որակավորմամբ) մասնագիտությունների գծով տալ գործունեության թույլտվություն:

2. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ Մ.Մովսիսյանին:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Մ.Մկրտչյանին:

??????.????????
May 7 2018 8:33 PM

ՎԱՀՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

(պարտականությունները կատարող)